ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3050-Ա «19» հունիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐՆ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1.1-րդ մասով՝

1. Անհետաձգելի համարել.

1) «Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

2) «Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

3) «Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ.10 հասցեում բազմահարկ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

4) **«**Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոց հ.17 հասցեում բազմահարկ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին**»** Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

5) «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 11-րդ փողոց հ.93 բնակելի տուն, հ.93/1, հ.97 բնակելի տուն և Գ.Ջահուկյան փողոց հ.95/2 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

6) «Սանհանգույցների վերանորոգման նախագիծը որպես նվիրատվություն ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

7) «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը,

8) «Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ